Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/2865/02/23

Վ Ճ Ի Ռ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

«24» հուլիսի 2023 թվական

քաղաք Երևան

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ժ. Ասատրյանս գրավոր ընթացակարգով քննելով ըստ հայցի «ԹԵՅՍԹԻ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՀՎՀՀ 01328869, պետական գրանցման համար 271.110.1268102, հասցեն՝ ՀՀ քաղաք Երևան Աջափնյակ 16 թաղամաս 14 շենք բնակարան 22, էլեկտրոնային փոստի հասցեն՝ tastygroup1@mail.ru) ներկայացուցիչ Լևոն Օհանյանի (անձը հաստատող փաստաթուղթ 013373451, տրված 16.08.2022 թվականին, 011-ի կողմից, հասցեն՝ ՀՀ քաղաք Երևան Իսրայելյան 39, փաստաբանական գործունեության արտոնագիր թիվ 1551, լիազորագիր տրված 14.12.2022 թվականին) ընդդեմ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (ՀՎՀՀ 01506928, հասցեն՝ ՀՀ քաղաք Երևան Ալեք Մանուկյան 1, էլեկտրոնային փոստի հասցեն՝ gnumner@ysu.am)՝ «Երևանի պետական համալսարանի՝ «ԹԵՅՍԹԻ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 27.03.2023 թվականին կայացված որոշումն անվավեր ճանաչելու» պահանջի մասին,

ՎՃՌԵՑ

1. «ԹԵՅՍԹԻ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ «Երևանի պետական համալսարանի 27.03.2023 թվականին «ԹԵՅՍԹԻ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու)» պահանջի մասին, բավարարել.

ա. Անվավեր ճանաչել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 27.03.2023 թվականի «ԹԵՅՍԹԻ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին կայացված որոշումը:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 31.05.2023 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցները պահպանել մինչև վճռի կատարումը՝ այնուհետև վճռի կատարումից անմիջապես հետո վերացնել:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

5. Վճռի կատարում ենթադրող մասը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ժ. ԱՍԱՏՐՅԱՆ